ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2014 թվականի փետրվարի 6-ի թիվ 4 որոշմամբ հրապարակվում է

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14

Պատվիրատուն՝ <ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14 ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը:

Հարցադրում:	Եթե առկա են անգլերեն լեզվի մասնագետի որակավորումը հավաստող դիպլոմ՝ տրված պետական բուհի կողմից, ինչպես նաև վերջին 5 տարվա ընթացքում մասնակցի կողմից կատարված բազմաթիվ թարգմանությունների (այդ թվում՝ իրավաբանական ոլորտին առնչվող) մասին վկայող փաստաթղթեր, մասնակիցն իրավունք ունի՞ մասնակցելու Ձեր կողմից հայտարարված մրցույթին, թե՞ կհամարվի, որ վերջինս չի համապատասխանում մրցույթի պահանջին և խախտել է մրցույթին մասնակցելու կանոնները:
Հարցադրման ստացման ամսաթիվ:	05 փետրվարի 2014թ.:
Պարզաբանում:	Եթե առկա են մասնակցի կողմից նշված որակավորումը հավաստող փաստաթղթերը, ապա վերջինս կարող է մատուցել սույն ընթացակարգի գնման առարկա հանդիսացող համապատասխան թարգմանության ծառայությունները: Միաժամանակ հարկ ենք համարում նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 010-511-788:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ <ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ: